

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ի 2017 թվականի N _____-Ն

«ԳՅՈՒՄՐՈՒ N 23 ՀԻՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ N 42 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ԵՎ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 774-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 64-րդ հոդվածները և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Գյումրու N 23 հիմնական դպրոց» (պետական գրանցման համարը՝ 29.210.01909) և «Գյումրու N 42 ավագ դպրոց» (պետական գրանցման համարը՝ 29.210.01911) պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպել՝ ստեղծելով «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Սահմանել, որ «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Գյումրու N 23 հիմնական դպրոց» և «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է, և դրանց իրավունքներն ու պարտականություններն անցնում են «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

3. «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության՝

1) առարկան հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացումն է.

2) նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

4. Թույլատրել «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- 1) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.
- 2) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.
- 3) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում.
- 4) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
- 5) սովորողների սննդի կազմակերպում:

5. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ» «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հետ համատեղ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել միաձուլման մասին պայմանագիրը, փոխանցման ակտն ու սեփականության իրավունքով «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը և արժեքը.

2) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հետ համատեղ «Գյումրու N 23 հիմնական դպրոց» և «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության դադարման պետական գրանցումը՝ «Գյումրու N 23 հիմնական դպրոց» և «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններ միջոցների հաշվին.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կանոնադրությունը.

4) «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաստատումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը՝ «Գյումրու N 23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

5) ապահովել սույն որոշմամբ վերակազմակերպված «Գյումրու N 23 հիմնական դպրոց» և «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սովորողների շարունակական ուսումնառության բնականոն գործընթացը «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

6) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Գյումրու քաղաքի Մուշ 2/2 հասցեում

գտնվող անշարժ գույքը հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 6-րդ կետում նշված գործընթացի ավարտից հետո վեցամսյա ժամկետում «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 18.01.2013 թվականի կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 17/0013 պայմանագրում սույն որոշումից բխող պայմանագրի փոփոխման մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր) և անհատույց օգտագործման պայմանագիր (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Գյումրու քաղաքի Մուշ 2/2 հասցեում գտնվող անշարժ գույք)՝ սահմանելով, որ համաձայնագրի ու պայմանագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ու պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

8. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» N 575-Ն որոշման հավելվածի 157-րդ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 774-Ն որոշման հավելվածի 21-րդ կետերը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

**«ԳՅՈՒՄՐՈՒ N 23 ՀԻՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ N 42 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 774-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Շիրակի մարզի «Գյումրու N 23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության սովորողների թվաքանակի կրճատմամբ և նշված դպրոցների տարածքների օպտիմալ օգտագործման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

2016-2017 ուսումնական տարում «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում սովորել է 41 աշակերտ, «Շիրակի մարզի «Գյումրու N 23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 873 աշակերտ: Աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կազմակերպելու և համապատասխան մասնագիտական որակյալ կադրերով ապահովելու նպատակով առաջարկվում է նշված դպրոցները միաձուլման ձևով վերակազմակերպել ստեղծելով «Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Հետագայում աշակերտական համակազմ ձևավորվելու արդյունքում և իր մասնագետների միջոցով անխափան կիրականացնի տվյալ դպրոցում սովորողների բնականոն ուսումնական գործընթաց:

Ակնկալվող արդյունքը

Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Գյումրու N 23 հիմնական դպրոց» և «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն և 2011 թվականի հունիսի 2-ի Ն 774-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ հրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Գյումրու N 23 հիմնական դպրոց» և «Գյումրու N 42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն և 2011 թվականի հունիսի 2-ի Ն 774-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**««ԳՅՈՒՄՐՈՒ N 23 ՀԻՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ N 42 ԱՎԱԳ
 «ԳՅՈՒՄՐՈՒ N 23 ՀԻՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԳՅՈՒՄՐՈՒ N 42 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
 ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ
 ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 774-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
 ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ
 ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաՆը, համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>1. Նախագծի 4-րդ կետով նշված ձեռնարկատիրական գործունեության տեսակներն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի հավելվածով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչով» սահմանված ՀՀ տնտեսական գործունեության տեսակներին՝ նկատի ունենալով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները:</p> <p>2. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դրույթները՝ նախագծի 5-րդ կետում «մասի» բառն անհրաժեշտ է</p>	<p>1. Ընդունված է</p> <p>2. Ընդունված է</p>	<p>1. Ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանելիս հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշումը:</p> <p>2. Որոշման նախագծի 5-րդ կետում «մասի» բառն փոխարինվել է «կետի» բառով, «կետերով» բառը՝ «ենթակետերով» բառով:</p>

		<p>փոխարինել «կետի» բառով, «կետերով» բառը՝ «ենթակետերով» բառով:</p> <p>3. Նախագծի 7-րդ կետում նախագծի 5-րդ կետին կատարված հղումն անհրաժեշտ է փոխարինել 6-րդ կետով, քանի որ համապատասխան գործընթացը նախատեսված է 6-րդ կետում:</p> <p>4. Նախագծի 8-րդ կետում «Հանրապետության» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «կառավարության» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջները:</p>	<p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p>	<p>3. Որոշման նախագծի 7-րդ կետում առաջարկին համապատասխան «5-րդ» Որ փոխարինվել է «6-րդ» թվի:</p> <p>4. Որոշման նախագծի 8-րդ կետում առաջարկին համապատասխան «Հանրապետության» բառից հետո լրացվել է «կառավարության» բառը:</p>
2.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-07-11 N 01/9-2/12517-17</p>	<p>1. Նախագծի 4-րդ կետի 1-ին ենթակետից հանել «պետական և հանրակրթական» բառերը:</p> <p>2. Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 52-ի 2-րդ կետի 3-րդ պարբերությունը՝ հստակեցնել Նախագծի 5-րդ կետի 3-րդ ենթակետը (ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում), քանի որ ՊՈԱԿ-ը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան:</p> <p>3. Նախագծի 7-րդ կետի 1-ին ենթակետում «կազմը» բառից հետո ավելացնել «և արժեքը» արտահայտությունը, իսկ 4-րդ ենթակետում «գրանցումը» բառից հետո ավելացնել «՝ Գյումրու N 23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին» բառերը:</p> <p>4. Ճշտել Նախագծի համարակալումը:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Չի ընդունվել</p> <p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p>	<p>1. Նախագծի 3-րդ կետից/ համարների ճշտումից հետո/ հանվել է «պետական և հանրակրթական» բառերը:</p> <p>2. « ՊՈԱԿ-ների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն « ՊՈԱԿ-ը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով»: Միաժամանակ, հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությամբ, որն հաստատվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ, ձեռնարկատիրական գործունեության այս տեսակը նախատեսված է:</p> <p>3. Նախագծի 6-րդ կետում առաջարկին համապատասխան ենթակետերում կատարվել է լրացումներ:</p> <p>4. Նախագծում կատարվել է համարակալումների ճշտում:</p>
3.	<p>ՀՀ տարածքային կառավարման և</p>	<p>1. Որոշման Նախագծի հիմնավորման մեջ բացակայում է միացման</p>		

	<p>զարգացման նախարարություն</p> <p>2017-07-10</p> <p>01/15.1/4280-17</p>	<p>ձևով վերակազմակերպման արդյունքում հաստիքների հնարավոր կրճատման, ինչպես նաև այդ կրճատվող հաստիքները զբաղեցնող անձանց այլ աշխատանքի տեղավորման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:</p> <p>2.Նախագծում, կամ Նախագծի հիմնավորման մեջ բացակայում են վերակազմակերպվող ՊՈԱԿ-ների կողմից զբաղեցրած անշարժ գույքի հետագա տիրապետման, տնօրինման հետ կապված հարցերը, որից ենթադրվում է, որ վերակազմակերպման գործընթացում ընդգրկված բոլոր դպրոցների շենքային մասերում շարունակվելու են ուսումնական պրոցեսներ:</p> <p>3.Առաջարկվում է վերանայել Նախագծի համարակալումը:</p> <p>4.Նախագիծը քննարկվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ: Համակարծիք լինելով ՀՀ Շիրակի մարզպետարանի դիրքորոշման հետ (կցվում է), առաջարկում ենք քննարկել «Գյումրու N 43 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին վերակազմակերպման գործընթացից հանելու հարցը:</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունված է</p> <p>3.Ընդունվել է</p> <p>4. Ընդունվել է</p>	<p>1.Նախագծի հիմնավորման մեջ լրացվել է երկու կազմակերպությունների վերակազմավորման ժամանակ աշխատողների հետագա աշխատանքի տեղավորման հարցը:</p> <p>2.Նախագծով նախատեսված երկու կազմակերպություններին ամրացված անշարժ գույքը պահպանվում է և փոխանցվում է նոր ստեղծվող կազմակերպությանը:</p> <p>3.Նախագծում կատարվել է համարակալումների ճշտում:</p> <p>4.Նախագծը լրամշակվել է՝ «Գյումրու N 43 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վերակազմակերպման գործընթացը հանվել է:</p>
<p>4.</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն</p> <p>2017-07-07</p> <p>N 01/22.2/4152-17</p>	<p>Նախագծում նախատեսվել էր որոյթներ միաձուլման ձևով վերակազմակերպվող <Գյումրու N 43 հիմնական դպրոց> և <Գյումրու N 23 հիմնական դպրոց> պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու, <Գյումրու N 23 միջնակարգ դպրոց> ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող անշարժ գույքի, ինչպես նաև <Գյումրու N 42 ավագ դպրոց> ՊՈԱԿ-ի հետ 18.01.2013 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 17/0013 պայմանագրում փոփոխություններ կատարելու կամ այն լուծելու վերաբերյալ:</p>	<p>1.Ընդունվել է</p>	<p>1. Որոշման նախագծի 6-րդ կետում լրացվել է 6-րդ ենթակետ և 7-րդ կետ:</p>
<p>5.</p>	<p>ՀՀ կառավարությանն</p>			

առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 2017-07-04 ՄՍ/4221-17	Առաջարկություններ դիտողություններ չունի	և	
---	--	---	--